

ՍԵՐՊԵՅ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*



Սերգեյ Աբրահամյանը ծնվել է 1925 թ. փետրվարի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (նախկինում՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ) Հաղբուլի շրջանի Տուժի գյուղում: 10-ամյա կրթությունն ստացել է տեղի դպրոցում: 1942–1944 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծանր վիրավորվել, երկար ժամանակ բուժվել, որից հետո զորացրվել է և վերադարձել Հայրենի գյուղ:

Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, որն ավարտել է 1950 թ.: Այնուհետև սովորել է ասպիրանտուրայում և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1966 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ 1965 թ. լույս տեսած «Ձթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից Հայերենում» ուսումնասիրության համար: Դոցենտի գիտական կոչումը ստացել է 1956 թ., իսկ պրոֆեսորի կոչումը՝ 1970 թ.: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1952–1953 թթ.՝ դասախոսելով Երևանի պետական համալսարանում, այնուհետև աշխատանքի է անցել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, իսկ հետո՝ արդի Հայերենի բաժնի վարիչ: Դասախոսական աշխատանք է կատարել Վանաձորի, Գյումրիի և Երևանի ինստիտուտներում:

Ս. Աբրահամյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով, մարտական և աշխատանքային մեդալներով, ին. Աբովյանի անվան մեդալով: Մահացել է 2005 թ.:

Հայերենագիտության ոլորտում նա գիտական լայն հետաքրքրություններ ունեցող գիտնական էր: Նրա ուշադրության կենտրոնում Հայերենի քերականական կառուցվածքի ձևաբանության և շարահյուսության ուսումնասիրության հարցերն էին, սակայն ուշադրությունից դուրս չէին մնում մյուս ոլորտներ՝ ուղղագրության, կետադրության, բառագիտության, ոճագիտության հետ կապված հարցերը: Ս. Աբրահամյանի ղեկավարում դա բնական էր և պայմանավորված էր նրա գիտական հետազոտություններ կատարելու ընկալումներով

* Ներկայացվել է 07. VII. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

և մեթոդաբանությունները: Հենց առաջին հրապարակումներում երևան է գալիս լեզվական իրողությունների մեջ խորանալու, դրանք նորովի քննելու և մեկնաբանելու ձգտումը, որն արտահայտվում է դեռևս 1959 թ. «Պատմա-բանասիրական հանդես»-ում տպագրված «Ժամանակակից հայ լեզվաբանության մի հերթական խնդիրը» հոդվածում. «Լեզուն մի բարդ ու ամբողջական համակարգ է, — գրում է նա: — Այդ բարդ համակարգը չի կարող միանգամից իր բոլոր կողմերով դառնալ գիտության ուսումնասիրության առարկա, որի պատճառով էլ այն ուսումնասիրվել և ուսումնասիրվում է ըստ իր բաղադրիչ մասերի»¹, այդ բաղադրիչ մասերը բառային կազմն է և քերականական կառուցվածքը: Այս շարքից դուրս է մնում հնչյունաբանությունը, որի հաշվառմամբ էլ լեզվի կառուցվածքի ուսումնասիրությունը կատարվում է այս երեք բաժիններով: Ըստ գիտնականի՝ սրանց զուգահեռ ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն բավարար չէ, որովհետև «... լեզվի, որպես ամբողջական սխեմայի կառուցվածքի մասին ամբողջական և ճիշտ գաղափար կազմելու տեսակետից նրա միայն բաղադրիչ մասերի առանձին-առանձին ուսումնասիրումը քիչ է: Անհրաժեշտ է ուսումնասիրել նաև այդ բաղադրիչ մասերի փոխհարաբերությունը, լեզվի տարբեր կողմերի փոխհարաբերությունը (ընդգծումները մերն են — Թ. Ա.)»²: Ս. Աբրահամյանի մոտեցումը լեզվի բառակազմի և կառուցվածքային երևույթների գնահատման առումով միանգամայն ընդունելի է այն պատճառաբանությամբ, որ ելնում է նկարագրական կամ կառուցվածքային լեզվաբանության մշակած սկզբունքներից, այն է՝ ոչ միայն պարզապես նկարագրել այս կամ այն լեզվական միավորը, կառուցվածքային բաղադրիչը առանձին-առանձին, այլ դրանք դիտարկել նաև փոխադասանավորվածության, փոխկապակցության մեջ, ճշտել դրանց փոխհարաբերությունների բնույթն ու աստիճանը: Այս հարցերը նա առավել մանրամասն քննում է իր «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» գրքում: Եթե սեղմ ձևակերպենք Ս. Աբրահամյանի մոտեցումը, այն է՝ եթե բառի բառական, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությունները քննել որպես ուսումնասիրության բուն առարկա, ապա դա կարող է թույլ տալ լեզվական իրողությունները ներկայացնել իրենց կապերի ու հարաբերությունների մեջ: Միայն այսպիսի համակողմանի ու խորքային քննությամբ կարելի է հասնել «... լեզվի, որպես ամբողջական սխեմայի» ընկալմանը:

Հայերենագետը բառագիտական առանձին ուսումնասիրություն չունի, սակայն հետևելով լեզվական իրողությունները փոխադարձ հարաբերությունների մեջ դիտարկելու իր մեթոդաբանությամբ՝ բառագիտական դիտարկումները ներկայացրել է հայերենի ձևաբանական համակարգի քննությանը, խոսքի մասերի դասակարգմանը վերաբերող աշխատություններում: 1950-ական թվականներին նա հրատարակել է երկու աշխատություն՝ «Արդի հայերենի դերանունները» (1956) և «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (1959): Այս աշխատություններում, հատկապես դերանունների դասակարգման ժամանակ ձևաբանական խնդիրները լուծում է բառերի բառային և ձևաբանական հատկանիշների փոխադասանավորվածությամբ: Պետք է ասել, որ այս

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2–3, էջ 52:

² Նույն տեղում:

պարագայում Ս. Աբրահամյանը հենվում է ոչ միայն իր կողմից կատարված հետազոտությունների, այլև իր նախորդների հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի ուսումնասիրությունների վրա: Բառային կազմի վերաբերյալ բառագիտական հայացքների ամբողջական համակարգը ներկայացված է վերը նշված «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ:

Լեզվական իրողությունները ուսումնասիրելու համար Ս. Աբրահամյանը անհրաժեշտ բառի համադրվող հատկանիշներն է նախ և առաջ փորձում որոշարկել: Դրանք են՝ բառի ձևային, իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները: Քննելով բառի իմաստային և ձևային հատկանիշների դերը՝ նա եզրակացնում է. «ա) բառի ընդհանուր իմաստային հատկանիշը կարող է պայմանավորել համապատասխան քերականական իմաստ և կարգ, բ) բառի ձևային հատկանիշը կարող է պայմանավորել քերականական ձևի հատկանիշ, գ) բառի իմաստային հատկանիշը կարող է պայմանավորել քերականական ձևի հատկանիշ»³:

Բառաձևերի կազմության մեջ կարևոր դեր վերագրելով նրանց և՛ ձևային, և՛ իմաստային հատկանիշներին՝ Ս. Աբրահամյանը ուշադրություն է դարձնում համաբանությանը, որի շնորհիվ առաջանում են նույն քերականական ձևերը, ինչպես, օրինակ, ձևաիմաստային հոլովումների դեպքում է:

Բառապաշարի զարգացումն ու հարստացումը լեզվաբանը պայմանավորում է մի կողմից տնտեսության, գիտության, մշակույթի բոլոր զարգացմամբ, մյուս կողմից՝ հայոց լեզվի նկատմամբ ժողովրդի և պետության հոգատարությունը: Լեզվաբանը բառապաշարի հարստացման միջոցներ է համարում հապավման լայն տարածվածությունը, նոր ձևավորված կայուն բառակապակցությունները, փոխառյալ բառերի յուրացումը, որոնցից շատերը ժամանակի ընթացքում փոխարինվեցին հայերեն համարժեքներով, իմաստային և կառուցվածքային պատճենումները, բառիմաստների ճշգրտումները, գրաբարի հնարավորությունների օգտագործումը:

Ս. Աբրահամյանը մեծ ուշադրություն է դարձրել բառակազմական երևույթների զարգացման ու տարածման միտումներին: Այս առումով կարևոր նշանակություն ունի նրա «Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները» հոդվածը⁴: Լեզվաբանն արժևորում է բառակազմության ոլորտում երևան եկած և արդեն ձևավորված օրինաչափությունները: Մասնավորապես նշում է բառապաշարի հարստացման կաղապարային եղանակը, որը հայերենի դեպքում եղել ու մնացել է որպես հիմնական եղանակ իր բառաբարդում, ածանցում և այլ տարատեսակներով: Հաջորդ միտումը գծիկով գրվող ածական համադաս բաղադրիչներով բարդությունների ծավալվելն է: Առանձին միտումներ են դիտվել բազմարմատ բառերի առատանալը և հապավումների կիրառության ոլորտների ընդլայնումը: Ս. Աբրա-

³ Ս. Աբրահամյան. Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, էջ 8–9:

⁴ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 32–47:

Համյանը կատարում է այն դիտարկումը, որ ժամանակակից Հայերենի բառապաշարը հարստանում է առավելապես տերմինաբանությունների հաշվին⁵։ Միաժամանակ փաստում է, որ այդ իրողությունները պայմանավորված են արտաբերական գործոններով։

Բառագիտական հետազոտությունները ամբողջացվել են 1981 թ. լույս տեսած «Ժամանակակից գրական Հայերեն» մենագրության մեջ, որտեղ առանձին բաժին է նվիրված բառագիտությանը։ Այստեղ ևս լեզվաբանը, ելնելով իր բառապաշարը համակարգային իրողություն համարելու մոտեցումից, արտահայտում է այն տեսակետը, որ բառագիտության ոլորտում ուսումնասիրության առարկան ոչ թե բառն է, այլ բառապաշարի դասակարգումների հետևանքով առաջացող բառաշերտերն իրենց խմաստային և բառակազմական օրինաչափություններով, ընդհանրություններով և տարբերություններով, փոխհարաբերություններով և փոխկապվածությամբ։ Միայն այսպիսի ուսումնասիրությունները թույլ կտան կատարել ընդհանրացնող եզրակացություններ բառագիտության ոլորտում։

Մեծ է Ս. Աբրահամյանի ավանդը ժամանակակից Հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրության ոլորտում։ Լեզուն իբրև համակարգ դիտելու և այն համակարգային վերլուծության ենթարկելու մոտեցումից ելնելով՝ լեզվաբանն անդրադառնում է բառագիտությանը, կետադրությանը, ոճագիտությանը, լեզվի ու բառապաշարի զարգացման ընթացիկ հարցերին, սակայն նրա ուշադրության կենտրոնում հայերենի քերականական կառուցվածքի՝ ձևաբանության և հատկապես շարահյուսության մինչ այդ բավարար չափով չլուսաբանված հարցերն են։

Հայ լեզվաբանական միտքը ժամանակի ընթացքում ցուցաբերել է տարբեր մոտեցումներ խոսքի մասերի սահմանման, բնութագրման, դասակարգման ուղղությամբ՝ անընդհատ լրամշակելով եղած տեսությունները և առաջարկելով նորերը։ XX դ. առաջին կեսին նշված հարցերի վերաբերյալ առանձին աշխատություններով իրենց տեսակետներն արտահայտեցին Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Գ. Սևակը, Ա. Ղարիբյանը։ Հայ լեզվաբանության մեջ մեծ ներդրում ունեցող այս լեզվաբանների կողքին խոսքի մասերի որոշման վերաբերյալ առանձնահատուկ մոտեցում է արտահայտել Ս. Աբրահամյանը «Արդի Հայերենի դերանունները» և «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից Հայերենում» աշխատություններում։ Վերջինս ամփոփում է խոսքի մասերի վերաբերյալ նախորդ աշխատություններում արտահայտած մոտեցումները։

... Դերանուն խոսքի մասը ներառում է խմաստային, քերականական և գործառական տարրեր հատկանիշներ ունեցող բառախմբեր, որը հնարավորություն չի տալիս ձևավորել միասնական տեսակետ դերանունների վերաբերյալ։ Մյուս կողմից էլ այդ բազմահատկանշությունը հարցը տարբեր տեսանկյուններից դիտարկելու դուռ է բացում։ Ուսումնասիրության համակողմանիությունն ապահովելու նպատակով Ս. Աբրահամյանը նախ հանգամանորեն անդրադառնում է հարցի պատմությանը։ Նա դերանունների՝ առանձին խոսքի մաս լինելու կամ չլինելու հարցը ներկայացնում է գիտականորեն հիմնավորված փաստարկնե-

⁵ Նույն տեղում, էջ 46։

րով, լեզվական փաստերի համակողմանի ու համակարգված ուսումնասիրությունը՝ հանգեցրել այն եզրակացություն, որ դերանվան հարաբերակից խոսքի մասերին փոխարինելու հատկությունը նրա միակ էական հատկանիշը չէ, որն ընդունված էր լեզվաբանների մեծ մասի կողմից: Հանգամանորեն ներկայացնելով դերանվան տեսակների՝ խոսքային միջավայրում կոնկրետ շարահյուսական կիրառությունների հնարավորությունները՝ լեզվաբանը ցույց է տալիս, որ ոչ բոլոր դերանուններն ունեն փոխարինման գործառույթ, իսկ եթե այդ դերով, այնուամենայնիվ, հանդես են գալիս, ապա դա «բխում է նրանց գործածության որոշ պայմաններից, այն բանից, որ այդ դեպքում նրանք ցույց են տալիս խոսողին հայտնի, անվանված առարկա, օբյեկտ: Այդ ֆունկցիան դերանունների ոչ թե էությունն է հանդիսանում, այլ այդ էությունից ու յուրահատուկ պայմաններից բխող հետևանք, ուրեմն և պայմանական ֆունկցիա է»⁶: Համեմատական վերլուծություն կատարելով դերանունների և նրան հարաբերակից խոսքի մասերի միջև՝ Ս. Աբրահամյանը եզրակացնում է, որ քերականական ընդհանրություններ չկան դերանունների և հարաբերակից խոսքի մասերի միջև. «Եթե դերանունները մասնատենք և դասենք այդ խոսքի մասերի շարքը, ապա դրանով իսկ կառաջացնենք ձևաբանական ու շարահյուսական տարբերություններ մյուս խոսքի մասերի մեջ»⁷:

Խոսքի մասերի և նրանց բնութագրման ու դասակարգման հարցերին Ս. Աբրահամյանն անդրադարձել է «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» ուսումնասիրության մեջ, սակայն իր տեսակետներն ու մոտեցումները նա մանրամասնորեն ու ամբողջական ձևով ներկայացնում է «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» հիմնարար աշխատությունում: Լեզվաբանը խոսքի մասերի իր ներկայացրած համակարգը թերություններից զերծ պահելու նպատակով նախ անդրադառնում է տարակարծությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ (առարկայական և ենթակայական) պատճառներին, որոնք, ըստ լեզվաբանի, հետևանք են տեսական տարբեր սկզբունքների կիրառման, ապա պատճառների վերլուծության ընթացքում գիտականորեն հիմնավորում և ներկայացնում է խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ իր սկզբունքներն ու մոտեցումները: Խոսքի մասերի վերաբերյալ եղած ըմբռնումներին անդրադառնալիս նա ուշադրություն է դարձնում խոսքի մասերի և բառային կազմի փոխհարաբերություններին, բառական ու քերականական իրողություններին, վերացարկման ու հակադրությունների մակարդակներին՝ խոսքի մասերի մեջ: Ցույց է տալիս, որ խոսքի մասերի դասակարգման դեպքում միայն ձևաբանական ու շարահյուսական հատկանիշները հաշվի առնելը բավարար հիմք չեն կարող հանդիսանալ, ուստի չի ընդունում լեզվաբանության մեջ տարածված այն տեսակետը, թե խոսքի մասերը սոսկ քերականական կարգեր են: Խոսքի մասատային իմաստը ոչ թե քերականական է, այլ բոլոր բառերի կոնկրետ իմաստների հիմքով կատարված վերացարկմամբ բառերի ընդհանուր իմաստը: Այստեղից էլ հետևում է, որ խոսքի մասերը բառաքերականական կարգեր են,

⁶ Ս. Աբրահամյան. Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 39–40:

⁷ Նույն տեղում, էջ 46:

ուստի, ըստ Ս. Աբրահամյանի, խոսքի մասերի դասակարգման պարագայում պետք է կարևոր դեր խաղա բառային ընդհանուր իմաստը: Մյուս կողմից էլ նա կարծում է, որ բոլոր խոսքի մասերի համար այս ու այլ հատկանիշներ՝ քերականական, բառակազմական և այլն, չեն կարող բոլոր խոսքի մասերի համար դասակարգման հիմք հանդիսանալ թե՛ միասին, թե՛ առանձին-առանձին վերցրած, քանի որ բառախմբերը միմյանցից տարբերվում են իմաստային և քերականական այլ հատկանիշներով: Ուրեմն խոսքի մասերի դասակարգումը գիտականորեն ճիշտ իրականացնելու համար պետք է կիրառել աստիճանական դասակարգման մոդելը: Ահա այս հարցերի յուրովի մեկնաբանությունն է հնարավորություն տալիս հեղինակին կատարել հայերենի խոսքի մասերի նոր տարահատկանիշ աստիճանական դասակարգում:

Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրության ընթացքում ընդգծվում է Ս. Աբրահամյանի գիտական առանձնահատուկ հետաքրքրությունը հայերենի շարահյուսական համակարգի նկատմամբ: Նրա շարահյուսագիտական հայացքները ներկայացված են «Հայոց լեզու. շարահյուսություն» (2004) գրքում: Շարահյուսական կապակցությունները քննում է երկու կարգի հարաբերությունների շրջանակում՝ քերականական և ստորոգական: Բառակապակցություններում բառերը, պահպանելով իրենց բառային արժեքը, կապակցվում են քերականական հարաբերությամբ՝ ձևավորելով գերադաս և ստորադաս անդամներից կազմված անվանողական արժեք ունեցող միավորներ, իսկ նախադասությունը հատուկ է ստորոգական հարաբերությունը: Դեռևս 1962 թ. լույս տեսած «Ժամանակակից հայերենի շարահյուսության հարցերը» աշխատության մեջ առաջին անգամ գիտականորեն առանձնացվել են երկկազմ և միակազմ նախադասությունները, ու շրջանառության մեջ են դրվել մի շարք նոր ըմբռնումներ՝ համապատասխան նոր եզրույթներով: Հայերենին բնորոշ են երկկազմ կառուցվածքային տիպերը, դրա համար էլ դրանց վերլուծությունն է գտնվում Ս. Աբրահամյանի ուշադրության կենտրոնում: Հետևելով կառուցվածքային լեզվաբանության մեջ ընդունված մեթոդին՝ նախադասությունների վերլուծությունը կամ տրոհումը կատարում է աստիճանականության սկզբունքով՝ տրոհման առաջին աստիճանում առանձնացվում են ենթակայի և ստորոգյալի խմբերը, իսկ վերջին աստիճանում նվազագույն միավորը՝ նախադասության անդամը: Նախադասությունների այսպիսի մոդելավորումը վերլուծության նոր սկզբունք էր: Այդպես նաև գիտական հիմնավորմամբ ենթակայի լրացումները վերանվանվեցին գոյականական անդամի լրացումներ, ստորոգյալի լրացումները՝ բայական անդամի լրացումներ՝ հիմք ընդունելով լրացյալների խոսքիմասային պատկանելիությունը: Նորություն էին նախադասություններն ըստ երանգի դասակարգելը, միակազմ նախադասությունների տարբերակումը դիմային հատկանիշ ունենալու կամ չունենալու հիմքով, բարդ նախադասությունների կառուցվածքային հատկանիշների մեկնաբանությունը, բազմաբարդ (բազմաբաղադրիչ) նախադասությունների կառուցվածքային տիպերը և այլն: Եվ վերջապես, նա հայերենի շարահյուսական համակարգի երկու բաղադրիչներին՝ բառակապակցությանը և նախադասությանը, ավելացրեց ևս մեկը՝ «Նախադասությունների կապակցությունը»:

Ս. Աբրահամյանի բոլոր այն աշխատություններում, որոնք վերաբերել են բառապաշարին, քննվել են նաև ոճաբանությունն ու խոսքի մշակույթին առնչվող բազմաթիվ հարցեր: Նույնիսկ խոսքի մասերին վերաբերող ուսումնասիրություններում առանձին բաժին է նվիրվել դրանց ոճական գործառնություն, ինչպես, օրինակ, «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ մի գլուխ նվիրված է դերանունների ոճական նշանակություններին: Հանգամանորեն անդրադարձել է գործառական, մասնավորապես, գիտական ու պաշտոնական ոճերին, նրանց հատկանիշներին և արտահայտության ձևերին⁸:

Հայերենի տերմինաշինության մասին խոսելիս լեզվաբանը հորդորում է հարցին մոտենալ միմիայն գիտականորեն՝ մի կողմ թողնելով անհատական ճաշակը և մոտեցումները՝ բառապաշարի հարստացումը պայմանավորելով նաև բազմաթիվ հաջողված նոր տերմինների ստեղծումով:

Նշված հանգամանքներն է հաշվի առնում Ս. Աբրահամյանը, երբ կանոնարկման տեսական դրույթների մշակմանը զուգահեռ առաջարկում է լուծել նաև գործնական խնդիրներ՝ կապված լեզվի գործառնության ու զարգացման հետ: Կանոնարկման համակարգի մեջ նա ներառում է և՛ լեզվական մակարդակի հարցերը (լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակները), և՛ լեզվի գործառնական տարբերակների գործառական ոճերի հարցերը, և՛ խոսքային (գրավոր և բանավոր) մակարդակի հարցերը (ուղղագրություն և ուղղախոսություն): «Ժամանակակից գրական հայերեն» (1981) աշխատության մեջ ժամանակակից գրական հայերենի բոլոր մակարդակների իրողությունները, որոնք տեսականի և գործնականի հաջողված միաձուլումներ են, ներկայացված են կանոնարկման նպատակադրումով:

Մեծ գիտնականը նաև հրաշալի ուսուցիչ-մանկավարժ էր: Նրա ուշադրության կենտրոնում են եղել թե՛ հանրակրթության, թե՛ բուհական ոլորտների խնդիրները՝ կապված հատկապես հայերենի ուսուցման հետ: Մեծ է Ս. Աբրահամյանի վաստակը թե՛ բուհական, թե՛ դպրոցական ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ ստեղծելու գործընթացում. բոլոր դեպքերում հաշվի են առնվել և՛ լեզվաբանության նվաճումները, և՛ դպրոցի առաջ ծառացած խնդիրները: Ընդհանրապես նրա գրքերը, լինեն գիտական աշխատություններ, դասագրքեր թե ուսումնամեթոդական ձեռնարկներ, աչքի են ընկնում շարադրանքի գիտականությամբ, տեսականի ու գործնականի սերտ կապով, խոսքի մատչելիությամբ: Հենց այս հատկանիշներով են օժտված «Հայոց լեզու. շարահյուսություն» (1984), «Հայոց լեզու. բառ և խոսք» (1986), «Մեր լեզուն և մեր դպրոցը» (2001), «Հայերենի կետադրություն» (2002) և ուսուցիչներին ու աշակերտությանն ուղղված բազմաթիվ այլ դասագրքեր ու ձեռնարկներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Ս. Աբրահամյանը մեծ քաղաքացի էր, իր հայրենիքի նվիրյալ զավակը: Արցախյան շարժման ժամանակ ակտիվ մասնակցություն է ունեցել հայրենի եզերքի ազատագրման և հաղթանակի կերտման գործում: Արցախը, իր ծննդավայրը՝ Հաղբուլթի շրջանի Տումի գյուղը, եղել են նրա ոգեշնչման ակունքները: Ինչպես ինքն է ասում, «Արցախը, Տումին սոսկ վայր չէ, որտեղ ծնվել եմ, այլ իմ կյանքի

⁸ Տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 3, էջ 15–26:

⁹ Տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, № 12, էջ 43–48:

ճանապարհի, այդ ճանապարհն անցնելու կերպի սկիզբը, իմ էությունը ծնող ու սնող ակունքը»¹⁰: Նշում է, որ իր մարդկային նկարագիրը ձևավորվել է բնիկ արցախցու օրինակով, իր ձեռքբերումները կրթության և գիտության մեջ հնարավոր են եղել ամենից առաջ իր մայր դպրոցի շնորհիվ: «Այս ամենի համար ես երախտավոր եմ իմ Արցախին, իմ գյուղին ու օջախին, իմ դպրոցին»¹¹, – գրում է Ս. Աբրահամյանը:

Բարձր գնահատելով ակադեմիկոս Ս. Աբրահամյանի վաստակը՝ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը 2001 թ. գիտնականի անունով է անվանակոչել նրա ծննդավայրի՝ Տումի գյուղի միջնակարգ դպրոցը՝ հասարակայնորեն արժևորելով հայ լեզվաբանության մեծերից մեկի՝ Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի գիտական և մանկավարժական բազմամյա գործունեությունը:

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

Բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ, Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկան: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, բառարանագրություն, հայոց լեզվի պատմություն, արևմտահայերեն: Հեղինակ է 1 մենագրության, 2 ուսումնամեթոդական ձեռնարկի, 40-ից ավելի հոդվածների: asoyan.60@mail.ru

¹⁰ «Հայագիտական հանդես», գիրք III, Երևան, 2002, էջ 81:

¹¹ Նույն տեղում: